ք. Երևան, Ս. Դավթի 87ա

« 15 » հունվար 2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ No. 6-Վ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Սարկիս Հովհաննեսի Շիրիկյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 10938/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Սարկիս Հովհաննեսի Շիրիկյանի (Հասցե Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., շ. 29, բն. 6, անձնագիր՝ 488781292, ՀՎՀՀ՝ 40106747) չկատարված հարկային պարտավորությունը 16.08.2022թ-ի դրությամբ կազմում է 27.838.228 դրամ, որից հարկ՝ 26.583.487, ՀՀ դրամ, տույժ՝ 1.254.741 ՀՀ դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 16.12.2024թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, , սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ֆիզիկական անձ Սարկիս Հովհաննեսի Շիրիկյանը Նվարթ Նորայի Շիրիկյանի հետ 1/2 բաժնային սեփականությամբ 18.05.2021թ. նվիրատվությամբ ֆիզիկական անձ Նորայր Արամայիսյանից ձեռք են բերել ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., 29 շենքից ներքոնշյալ անշարժ գույքերը.

- ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., շենք 29, բնակարան 6
- ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., շենք 29, ավտոկայանատեղի 3
- ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., շենք 29, ավտոկայանատեղի 2
- ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., շենք 29, ավտոկայանատեղի 1
- ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., շենք 29, շինություն 8
- ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., շենք 29, տարածք 9

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության՝ Նորայր Արամայիսյանը հանդիսացել է ք. Երևան, Արաբկիր, Վ. Դավթյան փող., 29 շենքի կառուցապատող:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝

140-րդ հոդվածին համապատասխան եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

141-րդ հոդվածին համապատասխան եկամտային հարկով հակման օբյեկտ է համարվում՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ ՀՀ աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների:

143-րդ հոդվածին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտները: Նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները: Սույն կետի կիրառության իմաստով՝ նվազեցվող եկամուտ չի համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքը:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ի կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գործառույթների շրջանակներում ձևավորվող հարկման բազաներն ու ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են ազատ (շուկայական) գների հիման վրա՝ ՀՀ կառավարության 09.03.207թ. N241-Ն որոշման N1 հավելվածով:

Ֆիզիկական անձ Սարկիս Հովհաննեսի Շիրիկյանը 2021թ. հաշվետու ժամանակաշրջանի համար պարտավոր էր 2022թ. ապրիլի 20-ը ներառյալ՝ հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) և վճարել դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը 16.08.2022թ-ի դրությամբ կազմում է 27.838.228 ՀՀ դրամ գումար, որից հարկ՝ 26.583.487 ՀՀ դրամ, տույժ՝ 1.254.741 ՀՀ դրամ:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Սարկիս Հովհաննեսի Շիրիկյանից գանձել 27.838.228 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

16.08.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2022թ	26.583.487	1.254.741		27.838.228	պետական բյուջե	900008000490

1. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՄԱՆ ՄԵԼՔԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ, իրավաբանական վարչություն
Զարուհի Ֆարմանյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: